Անվանումը՝ Ֆինանսական օգնության քաղաքականություն RV- RV- PV	**Քաղաքականության համարը՝ 67100.1**
Վավերացնող կողմը՝ PV-DCC, PV Policy Oversight Committee PV-DCC, PV Քաղաքականության վերահսկողության հանձնախումբ	**Կորպորատիվ հաստատման ամսաթիվը՝ Չի սահմանվել** **Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 02/14/2025** **Հաջորդ վերանայման ամսաթիվը՝ 02/14/2028**
Առդիր փաստաթուղթեր՝ Չկան	**Էջ 1/7**

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ի («Կազմակերպություն») քաղաքականությունը երաշխավորում է սոցիալականորեն արդար գործառույթ՝ Կազմակերպության հաստատություններում շտապ օգնության և բժշկական տեսանկյունից այլ անհրաժեշտ խնամքի իրականացման համար: Այս քաղաքականությունը հատկապես մշակվել է այնպես, որ լուծի ֆինանսական օգնության իրավասության հարցը այն հիվանդների համար, ովքեր կարիք ունեն ֆինանսական օգնության և խնամք են ստանում Կազմակերպությունից:

1. Բոլոր ֆինանսական օգնությունները կդրսևորեն մեր հանձնառությունը ընդհանուր բարօրության նկատմամբ, մեր հատուկ մտահոգությունը հանդեպ անձանց, ովքեր ապրում են աղքատության մեջ և այլ խոցելի իրավիճակներում, ինչպես նաև մեր հանձնառությունը ողջամիտ կիրառման նկատմամբ:

2. Այս քաղաքականությունը տարածվում է Կազմակերպության կողմից մատուցվող բոլոր տեսակի արտակարգ իրավիճակների և բժշկական տեսանկյունից այլ անհրաժեշտ ծառայությունների վրա, ներառյալ աշխատանքի կոչված բժիշկների ծառայությունները (Տես Ա Հավելվածը) և վարքագծային առողջությունը: Այս քաղաքականությունը չի տարածվում ընտրովի բուժգործողությունների համար վճարման պայմանավորվածությունների կամ այլ խնամքի վրա, որը չի պահանջում շտապ օգնություն կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէ:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Այս Քաղաքականության նպատակների համար, կիրառելի են հետևյալ սահմանումները.

- «**501(r)**» նշանակում է Ներքին եկամուտների օրենսգրքի (Internal Revenue Code) 501(r) բաժինը ու դրա ներքո հրապարակված կանոնակարգերը:
- «**Ընդհանրապես հաշվագրված գումարներ (Amounts Generally Billed)**» կամ «**AGB**». շտապ օգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ խնամքի համատեքստում նշանակում է այն գումարը, որը ընդհանրապես հաշվագրվում է անհատներին, ովքեր ունեն այդպիսի խնամքը ծածկող ապահովագրություն:
- «**Համայնք**» նշանակում է New Jersey նահանգի աշխարհագրական տարածքը:
- «**Շտապ օգնություն**» նշանակում է երկունք կամ այնպիսի լուրջ բժշկական վիճակ, որը, անհապաղ բժշկական ուշադրության բացակայության դեպքում կարելի է ողջախոհորեն ակնկալել, որ կհանգեցնի հիվանդի (կամ չծնված մանկան) առողջության լուրջ վտանգման, մարմնական գործառույթի լուրջ վնասման կամ

Տպագրված փաստաթղթերը համարվում են անվերահսկելի:
Տպագրված պատճենները հղման համար են միայն: Թարմացված տարբերակի համար խնդրում ենք տեսնել էլեկտրոնային պատճենը:

մարմնի որևէ օրգանի կամ մասի գործառույթի լուրջ խանգարման:

- «**Բժշկականորեն անհրաժեշտ խնամք**» նշանակում է այն խնամքը, որը համարվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ արտոնագրված բժշկի կողմից կլինիկական կարևորության մասին որոշման արդյունքում՝ ընդունող բժշկի հետ խորհրդակցելուց հետո:
- «**Կազմակերպություն**» նշանակում է Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ը:
- «**Հիվանդ**» նշանակում է այն անձինք, ովքեր շտապ օգնություն կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք են ստանում Կազմակերպության կողմից, ինչպես նաև այն անձը, որը ֆինանսապես պատասխանատու է հիվանդի խնամքի համար:

<u>Մատուցված ֆինանսական օգնություն</u>

1. Այն հիվանդները, որոնց եկամուտը նվազ կամ հավասար է Աղքատության դաշնային մակարդակի (Federal Poverty Level, FPL) 200%-ին, իրավասու կլինեն 100% բարեգործական խնամքի՝ դուրսգրման ծառայությունների դիմաց ծախսերի այն մասի համար, եթե կա այդպիսին, որը կազմում է Հիվանդի պատասխանատվությունը ապահովագրողի կողմից վճարումից հետո:

2. Աղքատության դաշնային մակարդակի («FPL») 200%-ից բարձր եկամտով Հիվանդները բարեգործական օգնության իրավասու կլինեն ըստ ստորև ներկայացվող չափանիշների.

<u>Եկամտի չափանիշներ</u>

Եկամուտը որպես տոկոսը Առողջապահության և մարդկային ծառայությունների (Health and Human Services, HHS) Աղքատության եկամտի ցուցումների	Գանձելիի տոկոսը Վճարված Հիվանդի կողմից
նվազ քան կամ հավասար 200%-ի	0%
ավելի քան 200% բայց նվազ քան կամ հավասար 255%-ի	20%
ավելի քան 225% բայց նվազ քան կամ հավասար 250%-ի	40%
ավելի քան 250% բայց նվազ քան կամ հավասար 275%-ի	60%
ավելի քան 275% բայց նվազ քան կամ հավասար 300%-ի	80%
ավելի քան 300%	100%

3. Եթե 20%-ից 80% սահող վճարի սանդղակով հիվանդները պատասխանատու են իրենց տարեկան համախառն եկամտի 30%-ից գերազանցող որակյալ բժշկական

ծախսերի (այսինքն՝ այլոց կողմից չվճարված հաշվագրերի) համար, ապա 30%-ից գերազանցող գումարը համարվում է հիվանդանոցային խնամքի վճարման օգնություն:

4. Ֆինանսական օգնության իրավասությունը կարող է որոշվել եկամտի պարբերաշրջանի (ցիկլ) որևէ պահի և կարող է ներառել ենթադրյալ գնահատման օգտագործումը՝ իրավասությունը որոշելու համար, անկախ նրանից, թե դիմորդը չի լրացրել ֆինանսական օգնության դիմումը (Ֆինանսական օգնության ծրագրի (Financial Assistance Program, FAP) դիմում («FAP դիմում»)):
5. Ֆինանսական օգնության համար իրավասությունը կարող է որոշվել որևէ հաշվեկշռի համար, որը կազմում է ֆինանսական օգնության կարիքը ունեցող Հիվանդի պատասխանատվությունը:

<u>Բարեգործական խնամքի ծրագիր.</u>

- New Jersey-ի Հիվանդանոցային խնամքի վճարումների օգնության ծրագիրը (Hospital Care Payment Assistance Program) (Բարեգործական խնամքի օգնություն [Charity Care Assistance]) անվճար կամ նվազեցված ծախսով խնամք է, որը մատուցվում է հիվանդներին, ովքեր ստանում են ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ New Jersey նահանգի ամբողջ տարածքի սուր խնամքի հիվանդանոցներում: Հիվանդանոցային օգնությունն ու նվազեցված ծախսով խնամքը հասանելի են միայն անհրաժեշտ հիվանդանոցային խնամքի համար: Մի շարք ծառայություններ, ինչպիսիք են բժշկի վճարները, անզգայացման վճարները, ռադիոլոգիական մեկնաբանությունը և ամբուլատոր հիվանդի դեղատոմսերը, անջատ են հիվանդանոցային ծախսերից և չեն կարող նվազեցման իրավասու լինել:
- Հիվանդանոցային խնամքի վճարման օգնության ֆինանսավորումը կատարվում է Առողջապահության դրամատվության հիմնադրամի (Health Care Subsidy Fund) կողմից՝ 1997 թվականի Հանրային օրենքի (Public Law) 263-րդ գլխի համաձայն: Այլ օգնություն՝ ֆինանսական օգնության ոչ իրավասու հիվանդների համար

<u>Այլ օգնություն հիվանդների համար, ովքեր իրավասու չեն ֆինանսական օգնության:</u>

Ֆինանսական օգնության համար ոչ իրավասու հիվանդները, ինչպես վերը նկարագրվել է, այնուամենայնիվ որակավորվում են Կազմակերպության կողմից մատուցվող այլ տեսակի օգնությունների համար: Ամբողջականության շահերից մեկնելով, օգնության այս տարբեր տեսակները թվարկված են այստեղ, չնայած դրանք չեն հիմնված կարիքի վրա և չեն նախատեսված 501(r)-ի ենթակա լինելու համար, սակայն այստեղ ներառված են Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ի կողմից սպասարկվող համայնքի հարմարավետությանը համար:

1. Ֆինանսական օգնության համար ոչ իրավասու չապահովագրված Հիվանդներին կտրամադրվի զեղչված սակագին, հիմնվելով ստորև ներկայացվող չափանիշների վրա.
   (ա) Ստացիոնար բուժգործողություններ՝ Medicare-ի սակագնի 100%-ը
   (բ) Շտապ օգնության բաժին այցեր՝ Medicare-ի սակագնի 115%-ը
   (գ) Ընտրովի ամբուլատոր հիվանդներ՝ Medicare-ի սակագնի 200%-ը
      (i) Մանկաբարձական և գեղարարական (կոսմետիկ) բուժգործողությունները հաստատել են ինքնավճարային վճարի ցուցակներ և ենթակա չեն Medicare-ի փոխհատուցման վրա հիմնված սակագնի:

<u>Ֆինանսական օգնության համար իրավասու հիվանդների համար ծախսերի սահմանափակումներ</u>

Ֆինանսական օգնության համար իրավասու հիվանդներից անհատապես չի գանձվի ավելի քան AGB-ն շտապ օգնության և բժշկական տեսակնյունից այլ անհրաժեշտ խնամքի համար, և ոչ ավելի, քան բոլոր բժշկական այլ խնամքների համար համախառն ծախսերը: Կազմակերպությունը հաշվարկում է մեկ կամ ավելի AGB-ի տոկոս՝ օգտագործելով «հետահայաց» մեթոդը և ներառելով Medicare-ի վճարովի ծառայությունն ու բոլոր մասնավոր առողջական ապահովագրողներին, որոնք բոլորն էլ պահանջներ են վճարում Կազմակերպությանը ըստ 501(r)-ի: AGB-ի հաշվարկի նկարագրության և տոկոս(ներ)ի անվճար պատճենը կարելի է խնդրելուց հետո ստանալ որևէ ընդունելության տարածքում: Հիվանդները կարող են AGB-ի հաշվարկի և տոկոսի անվճար պատճենը խնդրել փոստով, զանգահարելով Հիվանդի ֆինանսական ծառայություններ (Patient Financial Services) (201)383-1043 համարով և խնդրելով, որ պատճենն ուղարկվի Հիվանդի փոստային հասցեին:

<u>Դիմում Ֆինանսական օգնության և այլ օգնության համար</u>

Հիվանդը ֆինանսական օգնության համար կարող է որակավորվել ենթադրյալ գնահատման իրավասության միջոցով կամ դիմելով ֆինանսական օգնության համար՝ ներկայացնելով լրացված FAP դիմում: Ֆինանսական օգնության համար կդիտարկվեն այն ծառայությունները, որոնց վրայից 240-ից ավելի օր է անցել հետ-ծառայության առաջին հաշվագրային հաշվետվությունից հետո՝ նախքան այն ամսաթիվը, երբ հիվանդը սկզբնապես ներկայացնում է Ֆինանսական օգնության դիմումը: FAP դիմումը և FAP դիմումի հրահանգները և Պարզ լեզվով ամփոփումը (Plain Language Summary, PLS) հիվանդին հասանելի կդարձվեն հիվանդի խնդրանքով և անվճար: Եթե Հիվանդը

ցանկանում է ֆինանսական օգնության համար դիմել ծառայության օր(եր)ից հետո, Հիվանդը կարող է FAP դիմումն ու FAP դիմումի հրահանգները ձեռք բերել և ուղղակի տպել Hackensack UMC Pascack Valley-ի կայքից: Հիվանդները կարող են նաև փոստով խնդրել FAP դիմումն ու FAP դիմումի հրահանգների պատճենը: Փաստաթղթերի պատճենը փոստով խնդրելու համար Հիվանդը պետք է զանգահարի Հիվանդի ֆինանսական ծառայությունների (Patient Financial Services) բաժին (201)383-1043 հեռախոսահամարով: Վերոհիշյալ մատչելի վայրերից յուրաքանչյուրում FAP դիմումն ու FAP դիմումի հրահանգները հասանելի են առաջնային լեզվովը որևէ բնակչության, որը ունի անգլերենի սահմանափակ իմացություն և կազմում է հիվանդանոցի սպասարկած համայնքի 1,000 անհատ կամ 5 տոկոսը, որն ավելի փոքր լինի:

<u>Հիվանդից գանձումների ժամանակի սանդղակ – ստացիոնար և ամբուլատոր ծառայություններ</u>

Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ը տալիս է հաշվագրային հաշվետվություններ ծառայությունների համար, որոնք մատուցվում են ապահովագրության կողմից պահանջը մշակվելուց հետո կամ անմիջապես՝ ապահովագրություն չունեցող հիվանդների համար:

Հաշվեկշիռները, որոնք հիվանդի պատասխանատվությունն են, ներառում են հետևյալը.

- Ինքնավճար (առանց ապահովագրության Հիվանդ)
- Ինքնավճար Ապահովագրությունից հետո (Ապահովագրությունը բավարարել է իր պատասխանատվությունը և հիվանդը պատասխանատու է մնացած հաշվեկշռի համար)
- Բարեգործական խնամք (Ձեղչված ծախսեր՝ հիմնված բարեգործական տոկոսների վրա)
- Ինքնավճար Medicare-ից հետո (Հիվանդի պատասխանատվություն, ինչպես սահմանված է Medicare-ի կողմից)

<u>Հաշվետվության պարբերաշրջան</u>

Բոլոր հիվանդների համար փոստով հաշվետվություն է ուղարկվում հաշվեկշիռը հիվանդի պատասխանատվությունը դառնալուց մոտավորապես հինգ օր անց:

Բոլոր ինքնավճարով հաշվեկշիռներ – Ծանուցման ժամանակահատվածը 120-օրյա ժամանակահատվածն է, որը սկսվում է հետ-դուրսգրման հաշվագրային հաշվետվության 1-ին օրը, որտեղ արտակարգ գանձման ջանքեր չեն կարող նախաձեռնվել հիվանդի դեմ:

Տպագրված փաստաթղթերը համարվում են անվերահսկելի:
Տպագրված պատճենները հղման համար են միայն: Թարմացված տարբերակի համար խնդրում ենք տեսնել էլեկտրոնային պատճենը:

Անվանումը՝ Ֆինանսական օգնության քաղաքականություն RV- RV- PV	**Քաղաքականության համարը՝ 67100.1**
Վավերացնող կողմը՝ PV-DCC, PV Policy Oversight Committee PV-DCC, PV Քաղաքականության վերահսկողության հանձնախումբ	**Կորպորատիվ հաստատման ամսաթիվը՝ Չի սահմանվել** **Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 02/14/2025** **Հաջորդ վերանայման ամսաթիվը՝ 02/14/2028**
Առդիր փաստաթուղթեր՝ Չկան	**Էջ 6/7**

Հաշվետվությունը հիվանդին ուղարկվում է այն բանից հետո, երբ ապահովագրությունը բավարարում է իր բաժինը, եթե կիրառելի է: Եթե հիվանդի ժամկետանց պատասխանատվության ամբողջությունը չի գանձվում մինչև մարման ամսաթիվը, հիվանդը կշարունակի ստանալ հետագա հաշվետվություններ (ընդամենը մինչև 4 հատ): Վճարումը դեռևս ստացված չլինելու դեպքում, հաշիվը կուղարկվի գանձման գործակալություն:

Գործողություններ, որոնք կարող են ձեռնարկվել չվճարման դեպքում՝ Համաձայն Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ի Հաշվագրման/Գանձման քաղաքականության, և ամփոփելով այդ քաղաքականության համապատասխան հայեցակետերն այստեղ.

1. Հիվանդանոցային հաշիվների համար՝ Ինքնավճարի պատասխանատու հաշիվները, որոնք հիվանդին առնվազն չորս (4) հաշվետվություններ ուղարկված լինելուց հետո մնում են չվճարված ԵՎ 120 օր է անցել հիվանդին առաջին հաշվետվությունն ուղարկելու ամսաթվից, նշանակվում են որպես պարտազանց:

   ա. Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ը կենթարկվի տեղեկատվական պահանջներին՝ հիվանդին ծանուցելով որևէ արտակարգ գանձման գործողություն ձեռնարկելուց առնվազն երեսուն (30) օր առաջ:

2. Պարտազանց նշանակված հաշիվները իրավասու են փոխանցվելու վատ պարտքի կարգավիճակի և տեղադրվելու գանձման գործակալության կամ գանձման փաստաբանի մոտ՝ որպես պարտազանց հաշիվ, քանի դեռ հաշիվն ունի.

   ա. Գոհացուցիչ, ընթացիկ վճարման ծրագիր, կամ
   բ. Ընթացքի մեջ կամ հաստատված Ֆինանսական օգնության դիմում, կամ
   գ. Ընթացքի մեջ Բժշկական օգնություն կամ այլ օգնության ծրագրի դիմում:

Ֆինանսական օգնության դիմում ստացվելու դեպքում, Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ը կանի հետևյալը.

1. Դիմումը կուղարկի Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center

Տպագրված փաստաթղթերը համարվում են անվերահսկելի:
Տպագրված պատճենները հղման համար են միայն: Թարմացված տարբերակի համար խնդրում ենք տեսնել էլեկտրոնային պատճենը:

Ֆինանսական խորհրդատվության բաժին (Financial Counseling Department)

ա. Ֆինանսական խորհրդատուն (Financial Counselor)

բ. Կփաստագրի դիմումի ստացումը հիվանդանոցի ստացվելիք հաշիվների համակարգի նշումներում:

գ. Կներկայացնի դիմումի պատճենը և որևէ հիմնավորող փաստաթուղթ/հաղորդակցություն սկանավորման բաժին, որպեսզի որպես թվային պատկերներ կցվեն հաշվին:

դ. Հաշիվների համար, որոնք տեղադրվել են վաղաժամ դուրսգրման կամ գանձման գործակալության մոտ՝ կծանուցի համապատասխան գործակալություններին, որոնց մոտ է տեղադրվել հիվանդի հաշիվը, որ Ֆինանսական օգնության դիմում է ստացվել և նրանց կհրահանգի.

i. Տեղադրել 30-օրյա կասեցում բոլոր գանձման գործողությունների վրա, բացառությամբ բնականոն հետևողական հաղորդակցություններից՝ հաշվետվությունների միջոցով:

ii. Ընդհատել բոլոր գանձման արտակարգ գործողությունները (Extraordinary Collection Activities, ECA), մինչև որ Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center-ը հաստատի կամ մերժի դիմումը:

2. Կվերանայի դիմումը ամբողջականության և բոլոր հիմնավորող փաստաթղթերի ներկայացման համար: Եթե դիմումն ամբողջական չէ կամ բացակայում են անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր, դիմումը կմերժվի. այնուամենայնիվ, դիմումը կվերանայվի, եթե բացակայող փաստաթղթերը ներկայացվեն 30 օրվա ընթացքում: Դիմորդին կուղարկվի նամակ

ա. նրան տեղեկացնելու համար, որ դիմումը մերժվել է թերի լինելու պատճառով, սակայն կվերանայվի, եթե բացակայող տեղեկությունները ներկայացվեն 30 օրվա ընթացքում

բ. Հատկապես թվարկելով բացակայող տարրերը կամ այլապես հատկապես նկարագրելով թերությունը կամ բացակայող տեղեկությունները

գ. Դիմորդին տեղեկացնելով մարման ժամկետը, որը պետք է լինի նամակի օրվանից 30 օր հետո: Այս ժամանակահատվածը կարող է երկարաձգվել հավելյալ 30 օր, եթե Ֆինանսական խորհրդատվության

բաժնի հայեցողությամբ կա համոզում, որ դիմորդը գործում է բարեխղճորեն և ջանասիրաբար՝ բացակայող տեղեկությունների ձեռքբերման համար, բայց այդպիսի տեղեկությունները ուշանում է դիմորդի վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով: Ֆինանսական խորհրդատուն կհետևի և կկրկնի վերը նշված i. և ii. Քայլերը, որպեսզի ապահովվի, որ որևէ հետագա գանձման գործունեություն առկախվի մինչև 30 օր, մինչև հաջորդ մարման ժամկետը: Հաշվետվությունից 30 օր անց և հաշիվը 120 օր կամ ավելի լինելու դեպքում եթե վճարում չկա, հաշիվը կնշանակվի որպես պարտազանց և կուղարկվի գանձումների:

Իրենց հաշվեկշռի կամ ֆինանսական օգնության վերաբերյալ հարցեր ունեցող հիվանդները կարող են զանգահարել Հաճախորդների սպասարկում (Customer service) (844) 220-0013 հեռախոսահամարով:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա՝ Մատակարարներ ըստ բաժնի, որոնք մատուցում են շտապ կամ բժշկական տեսանկյունից այլ անհրաժեշտ առողջապահական ծառայություններ հիվանդանոցի հաստատություններում

Hackensack Meridian Health Pascack Valley Medical Center

Բաժին/Խումբ	**Ֆինանսական օգնության քաղաքականությամբ ծածկված մասնագիտություն**
Անզգայացում	ՈՉ
Ատամնաբուժություն	ՈՉ
Արտակարգ իրավիճակի բժշկություն	ՈՉ
Ընտանեկան գործառություն	ՈՉ
Դեղ	ՈՉ
Մանկաբարձություն և Գինեկոլոգիա	ՈՉ
Ակնաբուժություն	ՈՉ
Ոսկրաբուժություն	ՈՉ
Ախտաբանություն	ՈՉ
Մանկաբուժություն	ՈՉ
Հոգեբուժություն	ՈՉ
Ճառագայթում	ՈՉ
Ուռուցքաբանություն	ՈՉ
Ռադիոլոգիա	ՈՉ
Վիրաբուժություն	ՈՉ